այլ՝ ուղղելով « մայիս » ։ — Անձեռնարկելի է « աւգուստոս՝ » վերոյիշեալ պատմաուս։ — Ֆրոնիկոնի « հոկտեմբերին » դէմ եթէ ուղղագոյն հին օրինակ մի չկարենանք գտնել, « յունուարի » հետ դասելի է։ — իսկ և « դեկտեմբերն » ուղղելի է « դեկեմբեր՝ » ըստ ճիշդ և հնագոյն ընթերցուածոյ Շիրակունւոյն։

ՀԱՅՈՒՆԻ

Պ. ՎԱՀՐԱՄ ՍՎԱՃԵԱՆ

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏ

—

Պարիսու լրագիրք փետրուարի առաջին օրերուն մէջ կը ծանուցանէին՝ որ « հայ երիտասարդ դաշնակահար մը Պ. Վահրամ Սվաճեան, աշակերտ Վենետկոյ՝ և Վիեննայի երաժշտանոցաց, յետ յաջող նուագահանդիսական պտոյտներու յԱնգղիա, 'ի Գերմանիա և 'ի Զուեցերիա, 'ի Պարիս ևս եկեր էր և փետրուար 9ին Լիրար սրահին մէջ նուագահանդէս մը պիտի տար, առաջին մասը արևմտեան երաժշտութեամբ, երկրորդը՝ հայկական երաժշտութեամբ, որ իրեն սեպհական ուսումնասիրական ճիւղն ըրած էր »։ Մի անգամայն կը յաւելուին գովեստներ երաժշտին տաղանդին վրայ։

Եւ ահա Գաղղիոյ մայրաքաղաքին մէջ ևս, ուր կը դիմեն ամենայն երաժշտական հանճարներ, և ուր հարկ էր մասնաւոր աջողակութիւն մը և խրախոյս ունենալ հասարակութեան ներկայանալու համար, Պ. Վահրամ Սվաճեան ունեցաւ երկուքն ալ լիովին արդեամբք։

Փետրուար 10ի Temps լրագրին թատերական տեղեկութեանց մէջ կը կարդանք հետեւեալ տողերը.

« Պ. Վահրամ Սվաճեան հայ երիտասարդ դաշնակահարը, որուն նուագահանդէսը քիչ օր առաջ ծանուցինք, երէկ երեկոյ զայն կատարեց գերազանցապէս աղնուաշուք և բազմաթիւ ունկնդրաց առջև։

Նուագահանդիսին առաջին մասը կը կազմէին ընտիր դասական (classique) կտորներ, Բէտովէնի հնչիւն մը, Շիւմանի արաբական մը և Լիսցի՝ Սոորը փրանկիսկոս Պաւլայեցի քայլերով ալեաց վրայ, որոնք ցրցուցին Պ. Սվաճեանի արհեստական ամենաչքնաղ յատկութիւնքը։

Հայկական երգերուն մէջ, զորս ժողովրդ և դաշնակի վերածեր էր և որոնք ծրագրին երկրորդ մասը կը կազմէին, երիտասարդ երաժիշտը եռանպագին ծափահարութիւնք ուներցաւ զմայլեալ հասարակութենէն, որ յուզուեր էր այդ փափուկ և միանգամայն զգայուն երաժշտութենէն »։

Մեզ համար կրկին ուրախանալու մեծ նիւթ կայ, նախ Պ. Վահրամ Սվաճեան հայ դաշնակահարին լիովին յաջողութեանը վրայ, երկրորդ հայկական երաժշտութեան գըտած յուզեալ ընդունելութեանը համար։ Այսպէս ահա նոր ասպարէզ մը կը բացուի հայ երիտասարդ երաժշտաց ուսումնասիրելու ազգային երգեցողութիւնքը, ոչ միայն ժողովրդականքը՝ այլ և եկեղեցականքը, յորս կը գտնուին արհեստի հիանալի կտորներ, որք թէ առանց փոխուելու վերածուին եւրոպական ներդաշնակութեան կանոնաց, նոր և գեղեցիկ երաժշտութիւն մը պիտի կազմեն սեպհական կնիքով մը։

---

1. Պ. Վահրամ Սվաճեան, աշակերտ Մուրատ-Ռափայէլ վարժարանի, ուր տարուան ժամանակ՝ սկսեալ 1877էն՝ դաշնակահարութեան և ներդաշնակութեան առաջին տարիները ըրած է 'ի Վենետիկ, ընդուղղութեամբ ասպետ Նիկողայոս Քոքոնի, նշանաւոր երգագիր 'ի քաղաքիս, որ ցարդ զմայլմամբ և սիրով կը յիշէ Պ. Վ. Սվաճեանի արտաքոյ կարգի կարողութիւնը։

digitised by A.R.A.R.@